ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/22/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 26-ին քննելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Դավիթ Մարատի Սերոբյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները 2021 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրում ոչ ամբողջական, ինչպես նաև սխալ տվյալ ներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի մայիսի 20-ի թիվ ՎԻՎ 22/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

213

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Դավիթ Մարատի Սերոբյանի կողմից 2021 թվականի մայիսի 27-ին ներկայացրած «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) վերջինս չի հայտարարագրել Բ.2.2. «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված տրանսպորտի միջոցը» և «Առկա են եկամուտներ (աշխատավարձ և այլ եկամուտներ)» բաժիններում իրեն պատկանող 03.09.2020 թվականին 3,250,000 ՀՀ դրամով օտարված TOYOTA CAMRY 2.4 մակնիշի մարդատար տրանսպորտի միջոցը, «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» բաժնում Արմեն Սերոբյանին պատկանող «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, Հայտարարագրում՝ տարեսկզբին, հայտարարագրել է 500 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ, այն պարագայում, երբ առկա տվյալների համաձայն՝ 01.01.2020 թվականի դրությամբ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա են եղել 623 ԱՄՆ դոլար և 850,330.21 ՀՀ դրամ հաշիվների մնացորդներ:

Վերոնշյալների առնչությամբ 2022 թվականի մայիսի 20-ին հարուցվել է թիվ ՎԻՎ 22/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 20-ին Դավիթ Սերոբյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 22/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

244

1.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 26-ին, որն իրականացվել է Դավիթ Սերոբյան բացակայությամբ:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Դավիթ Սերոբյանն իր գրավոր դիրքորոշմամբ, TOYOTA CAMRY մարդատար տրանսպորտային միջոցը «Առկա են եկամուտներ (աշխատավարձ և այլ եկամուտներ)» բաժնում չհայտարարագրելու մասով հայտնել է, որ տրանսպորտային միջոցի օտարման և օտարման պայմանների (օտարման ամսաթիվ, գնորդի տվյալներ, տրանսպորտային միջոցի նույնականացման համար, գին) մասին «տրանսպորտային միջոցներ» բաժնում ամբողջ և անհրաժեշտ ծավալի տեղեկություն տրամադրվել է և այդ հանգամանքն իր կողմից համարվել է որպես բավարար, իսկ «Առկա են եկամուտներ (աշխատավարձ և այլ եկամուտներ)» բաժնում չհայտարարագրելու հանգամանքը կրել է տեխնիկական բնույթ և չի կարող էական նշանակություն ունենալ Հանձնաժողովի գործառույթներն իրականացնելու իմաստով:

Դավիթ Սերոբյանը նշել է նաև, որ Արմեն Սերոբյանին պատկանող «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի վերաբերյալ Հանձնաժողովին պարզաբանում ներկայացնելու նպատակով դիմել են ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հիմնավորելու այն փաստը որ «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ գրանցվել է, սակայն երբևէ գործունեություն չի իրականացրել (կցվել է գործունեությունը դադարեցնելու դիմումը և ծանուցումը այդ դիմումը ՀՀ ՊԵԿ կողմից ընդունելու մասին): Հետևաբար, բաժնեմասը չհայտարարագրելը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես եկամուտներ թաքցնել կամ կոռուպցիոն ռիսկեր պարունակող այլ երևույթներ: Միաժամանակ, այլ ապացույցներ ներկայացնելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ, ուստի հնարավոր չէ սեղմ ժամկետում դրանք ներկայացնել:

Անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ Դավիթ Սերոբյանը պարզաբանել է, որ բանկի կողմից տրված քաղվածքի համաձայն իրոք արտարժույթի մնացորդը տարվա վերջում կազմել է 623 ԱՄՆ դոլար՝ հայտարարագրված 500 ԱՄՆ դոլարի փոխարեն, իսկ Հանձնաժողովի կողմից նշված 850,330.21 ՀՀ դրամ

285

մնացորդը չի համապատասխանում իրականությանը, քանզի իրականում անկանխիկ դրամական միջոցների մնացորդը կազմել է 100,000.00 ՀՀ դրամ (կից ներկայացվել է քաղվածքը)|: Նշել է նաև, որ հայտարարագիր ներկայացնելիս այդ տվյալների հիմք են հանդիսացել էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված քաղվածքները, որոնք որոշ չափով (թերևս, ծրագրային ինչ-ինչ պատճառներով) տարբերվել են հայտարարագրման օրվա դրությամբ, իսկ եթե նկատի ունենալ նաև այն, որ այդ գումարները աշխատանքի վարձատրության արդյունքում են գոյացել, որի մասին ամբողջական տեղեկատվություն Հանձնաժողովին տրամադրվել է, ապա այդ անհամապատասխանությունները չեն կարող որոշիչ լինել կոռուպցիոն ռիսկերը գնահատելու համար:

Դավիթ Սերոբյանի համոզմամբ, վերը նշված խախտումները կրում են տեխնիկական, ձևական բնույթ և չեն կարող դսատավորին պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ, առացվել ևս, որ կոռուպցիոն ռիսկերի մասին խոսք չի կարող լինել:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ 22/22 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի ուսումնասիրություն, հաստատված է համարում հետևյալը.

- Դավիթ Սերոբյանը Հայտարարագրի «Առկա են եկամուտներ (աշխատավարձ և այլ եկամուտներ)» բաժնում չի հայտարարագրել իրեն պատկանող 03.09.2020 թվականին 3,250,000 ՀՀ դրամով օտարված TOYOTA CAMRY 2.4 մակնիշի մարդատար տրանսպորտի միջոցի օտարումից ստացված եկամուտը, մինչդեռ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից 04.11.2021թ. տրամադրված թիվ 94761-21 գրության համաձայն՝ Դավիթ Մարատի Սերոբյանը 03.09.2020 թվականին 3,250,000 ՀՀ դրամով օտարել է իրեն պատկանող TOYOTA CAMRY 2.4 մակնիշի մարդատար տրանսպորտի միջոցը: Հետևաբար, Դավիթ Մարատի Սերոբյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

- Դավիթ Սերոբյանը Հայտարարագրի «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել Արմեն Սերոբյանին պատկանող «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, մինչդեռ ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2021 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 25.8/35072-2021 գրության համաձայն՝ Արմեն Սերոբյանին 06.11.2019 թվականից պատկանում է «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100 % բաժնեմասը: Հետևաբար, Դավիթ Մարատի Սերոբյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:
- Հայտարարագրում՝ տարեսկզբին, հայտարարագրել է 500 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ: ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 01.01.2020 թվականի դրությամբ Դավիթ Սերոբյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա են եղել 500 ԱՄՆ դոլար Հետևաբար, Դավիթ Մարատի Սերոբյանի Հայտարարագրում առկա է *սխալ ներկայացված տվյալ*:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 Դավիթ Մարատի Սերոբյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ 1) եկամտի տեսակը, 2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, 3) եկամտի չափը (գումարը), 4) եկամտի արժույթը:

4.3 Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.4 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր *ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համա*ր:

4.5 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.10 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտումներ, այն է՝

- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Դավիթ Մարատի Սերոբյանը Հայտարարագրի Գ.1 «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չի հայտարարագրել իրեն պատկանող 03.09.2020 թվականին 3,250,000 ՀՀ դրամով օտարված TOYOTA CAMRY 2.4 մակնիշի մարդատար տրանսպորտի միջոցի օտարումից ստացված եկամուտը, որով խախտվել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի պահանջը, որի համաձայն հայտարարագրման ենթակա է Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը:

239

- Դավիթ Սերոբյանը Հայտարարագրի «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել Արմեն Սերոբյանին պատկանող «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:
- Հայտարարագրում՝ տարեսկզբին, Դավիթ Սերոբյանը հայտարարագրել է 500 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ: Մինչդեռ, հարուցված վարույթի ընթացքում վերջինիս կողմից ներկայացված՝ ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ 01.01.2020 թվականի դրությամբ Դավիթ Սերոբյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա են եղել 500 ԱՄՆ դոլար մնացորդներ:

Նշված արարքները հանդիսանում են վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (***հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը***):

Իսկ վերաբերում է արձանագրված վերոնշյալ 3-րդ կետով սահմանված խախտմանը՝ կապված բանկային հաշիվներում առկա մնացորդը սխալ հայտարագրմանը, ապա սույն գործով ստացված ապացույցով (26.05.2022 թվականի ՓԲԸ-ի տեղեկանք) հաստատված է համարվում, որ բացակայում է իրավախախտման դեպքը՝ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

280

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է ***յուրաքանչյուր գործով գնահատել***, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Դավիթ Սերոբյանի կողմից տրանսպորտային միջոցի օտարման և օտարման պայմանների (օտարման ամսաթիվ, գնորդի տվյալներ, տրանսպորտային միջոցի նույնականացման համար, գին) մասին «Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված տրանսպորտի միջոցը» բաժնում ամբողջ և անհրաժեշտ ծավալի տեղեկությունն արդեն իսկ տրամադրվել է, իսկ

281

«Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չհայտարարագրելու հանգամանքը կրել է տեխնիկական բնույթ, անձի արարքով վնասակար հետևանք չի առաջացել, և գործի փաստական տվյալներով հաստատված է, որ իրավախախտը նպատակ չի ունեցել վնասակար հետևանք պատճառել:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Դավիթ Սերոբյանի կողմից Արմեն Սերոբյանին պատկանող «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը Հայտարարագրի «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» բաժնում չհայտարարագրելու հանգամանքի հետ կապված Դավիթ Սերոբյանն իր գրավոր բացատրությամբ նշել է, որ «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ գրանցվել է, սակայն երբևէ գործունեություն չի իրականացրել, հետևաբար, բաժնեմասը չհայտարարագրելը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես եկամուտներ թաքցնել կամ կոռուպցիոն ռիսկեր պարունակող այլ երևույթներ (բացատրությանը կցվել է գործունեությունը դադարեցնելու դիմումը և ծանուցումը այդ դիմումը ՀՀ ՊԵԿ կողմից ընդունելու մասին): Նշված փաստը հաստատվել է նաև Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությամբ, որի համաձայն «ԳԻԴԵՈՆ ԼԱԲՍ» ՍՊԸ-ն՝ գրանցված 06.11.2019թ., *2020 թվականի մայիսի 20-ից ունի ժամանակավոր դադարեցված կարգավիճակ:* Հանձնաժողովի դիրքորոշմամբ, գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Դավիթ Մարատի Սերոբյանի կողմից կատարված խախտումները հանրային վտանգավորության տեսակետից ունեն նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

222

Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, 282-րդ և 283-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դավիթ Մարատի Սերոբյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Մարատի Սերոբյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Դավիթ Սերոբյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղում կատարելու համար:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

283